33. ՃՈՐՏՈ-ԲՈՐՏՈ

Կէղնի չէղնի պառավ մի կէղնի։ Էդ պառվուն մեկ կով կէղնի։ Հ՚ըմնօր կը կթե, կաթ կը դնե փանջարեն, հ՚իրկուն կիգա կտեսնի կաթ չկա։

Կըսե.—Կա՛նի օր մի ես նստիմ փանջարեն, տեսնամ ի՞նչ կէղնի իմ կաթ։

Կնստի փանջարեն, սաթըռ լե կառնի ձեռք։ Կտեսնի օր առջ գիգա պոչ կը թաթխե մըջ կաթին։ Սաթըռով կը ղարկե պոչ կը կտրե։

Առջ կէրթա, քիչ մի կը մնա ու կը դառնա գիգա։

Կըսե.—Պառավ, պառավ, տուր իմ պոչ կցեմ, մըցմըցեմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց, օր չըսեն. «Ճորտո-բորտո՛, հ՚ուստե՞ն գիգաս»։

Պառավ կըսե.—Գնա՛, իմ կաթ բիր, տամ քու պոչ, առ ու գնա։

Առջ կէրթա կովուն կըսե.—Կո՛վ, կո՛վ, տուր ընձի կաթ, տանեմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կըցեմ, մըցմըցեմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց, չըսին՝ «Ճորտո-բորտո՛, հ՚ուստե՞ն գիգաս»։

Կով կըսե.—Գնա բիր ընծի խոտ, տամ քզի կաթ, տար տուր պառվուն, պառավ լե տա քու պոչ, դնա հասի քու ընկերտոց։

Հոնկուց թողեց գնաց չայիր։

Ըսեց.—Չայի՛ր, չայի՛ր, տուր ընծիկ խոտ, տանիմ տամ կովուն, կով տա ընծի կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կցեմ, մըցմըցեմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց։

Չայիր կըսա.—Գնա ընծի ճըռ մի ջուր բիր, տամ քզի խոտ,

տար տուր կովուն, կով տա քզի կաթ, տար տուր պառվուն, պառավ տա քու պոչ, կրցե, մրցմրցե, գնա հասի քու ընկերտոց։

Դնաց աղբուր։

Ըսեց.—Աղբո՛ւր, աղբո՛ւր, ջուր տուր ընծի, տանիմ տամ չայիրին, չայիր տա ընծիկ խոտ, տանիմ տամ կովուն, կով տա ընծի կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կցեմ ու մրցմրցեցեմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց, չըսին.—«Ծորտո-բորտո՛, հ՝ուստե՞ն գիդաս»։

Աղբուր կըսե.—Դնա՛ ընծի խունկ բի, իտամ քզիկ ջուր, տար տուր չայիրին, չայիր տա քզի խոտ, տար տուր կովուն, կով տա քզի կաթ, տար տուր պառվուն, պառավ տա քզի պոչ, կրցե մրցմրցե, գնա հասի քու ընկերտոց։

Կէրթա խնկան կըսե.—Խո՛ւնկ, տուր քու խունկ, տանիմ տամ աղբրին, աղբուր տա ջուր, ջուր տանիմ տամ չայիրին, չայիր տա ուր խոտ, տանիմ տամ կովուն, կով տա ուր կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կրցիմ մրցմրցիմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց։

Խունկ կըսե.—Ա՛ռ ու գնա՛։

Կառնե խունկ, կբերե կիտա աղբրին, աղբուր կիտա ուր ջուր, կը տանի կիտա չայիրին, չայիր կիտա ուր խոտ, կը տանե կիտա կովուն, կով կիտա ուր կաթ, կը տանե կիտա պառվուն, պառավ կիտա ուր պոչ, կը կրցե, կրցմրցե, կէրթա կը պառկի ճամբու վրեն ու ուրին կը թալե սուտ մեռել։

Հարսնիք մի գիգա էնդիեն, կը տեսնան օր առջ մը փիցուկ. հ՝ընկուկ է ճամբու վրեն, կուրախնան, կը վերցուն դնեն հարսի թարքին։

Կըսեն.—Իդա լե մեր հարսի ոբսխրն է։

Կառնին, կէրթան։ Ճամբու հետ Առջ կ՝իմնա։

Կիմնա, կըսե.—Հա՛րս, յան քու շորեր կիտաս ընծիկ, յան կըսիմ հարս գըդռեց։

Հարս կը հանա շորեր կիտա Առջուն։

Առջ կը տեսնա օր հարսի վրեն օսկի լե կա, շորերու տակն է կախի։

Կըսե.—Հա՛րս, քու օսկիք կիտաս ընծիկ, յան լե չէ կըսիմ՝ հարս սիրողութեն կէնե իմ հետ։

Հարսի ճար կը կտրի, կը հանե օսկիք լե կիտա։

Հարսնքվորներ կը տեսնան օր, հարս տեթուռութ նստուկ է ձիու վրեն։

Օր կը տեսնան, ուրանք ուրանց կըսին. «Կա ու չկա էտ բան Առջն է էրի»։ Կիգան օր Առջ զարկին սպանին։

Առջ կառնի ջորեր-մորեր, կթոնի ձիու վրեջեն ցած, կը փախնի, կէրթա կը հասնի ուր ընկերտոց։

Կէրթա կը հասնի ուր ընկերտոց, ընկերտանք կըսին. «Ճորտիկ-բորտի՛կ, հ՚ուստե՞ն գիգաս»։

Կըսե.—Գացի իմ պոչ թաթխի մըջ կաթին, պառավ զարկեց սաթըռով իմ պոչ կտրեց, գացի ասի. «Պառավ, պառավ, դու էղնիս ու քու աստված, իմ պոչ տուր, էրթամ հասնիմ իմ ընկերտոց»։ Պառավ ըսեց. «Գնա բի իմ կաթ, իտամ քու պոչ»,—կըսե.—գացի կովուն ըսի, կո՛վ, կո՛վ, տուր քու կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կըցիմ մըցմըցիմ, էրթամ հասնիմ իմ ընկերտոց, չըսին «Ճորտո-բորտո հ՚ուստե՞ն գիգաս»։ Կով ըսեց՝ «Գնա ընծիկ խոտ բիր, իմ կաթ տամ[1] քզիկ, տար տուր պառվուն, տա քու պոչ, կըցե մըցմըցե, գնա հասի քու ընկերտոց»։ Գացի չայիրին. «Չայի՛ր, չայի՛ր, տո՛ւր քու խոտ, տանիմ տամ կովուն, կով տա ուր կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կըցիմ, մըցմըցիմ էրթամ հասնիմ իմ ընկերտոց, չըսին «Ճորտո-բորտո՛, հ՚ուստե՞ն գիգաս»։ Չայիրն ըսեց՝ «Գնա ընծի ջուր բիր, իտամ, առնիս էրթաս»։ Գացի աղբրին ըսի՝ «Աղբուր, տուր քու ջուր, տանիմ տամ չայիրին, չայիր տա ընծի խոտ, տանիմ տամ կովուն, կով տա ընծիկ կաթ, տանիմ տամ պառվուն, պառավ տա իմ պոչ, կըցիմ, մըցմըցիմ էրթամ հասնիմ իմ ընկերտոց»։ Աղբուրն ըսեց. «Գնա ընծիկ խունկ բիր, տամ քզիկ ջուր, ա՛ռ ու գնա»։ Գացի առա խունկ, էկա տվի աղբրին, աղբուր տվեց ջուր, տարա տվի չայիրին, չայիր տվեց ուր խոտ, տարա տվի կովուն, կով տվեց ուր կաթ, տարա տվի պառվուն, պառավ տվեց իմ պոչ, կըցի, մըցմըցի, էկա հասա ձզիկ։

— Ըպա,—կըսին,—իդա ջորեր հ՚ուստե՞ն է քզիկ։

Կըսե.—Սաբախտուն ջուտ գացի, իմ պոչ կախեցի ջրի մեջ պաղավ, քաշի, էդ ջորերն ու օսկիքն էկան իմ պոչի հետ։

Լուսուն օր էղավ, առջեր հ՚ըմեն հ՚ելան էկան ուրանց պոչեր կախին ջրի մեջ։

Օր ճըխտին ջրի մեջ, եփօր պաղավ, քաշին, չքաշին՝ չկըոցան փրցուցին, տեղոց տեղը փիդնան կը մնան։

Առջ ուր քեֆին կթորկե, կէրթա։

---

1 Բնագրում՝ տամ չիք (Ծ. Կ.)։